

Մեքսիկայի համար կ'ըսէ. «քանզի անցեալ էր քան զչափն՝ որ գրեալ էր ի մէջ նամակին իւրոյ:»

Որչափ ալ ցայս վայր յիշուած թուականներն Աբէլ Արքեպ. ի ժամանակի մասին հաստատուն են, դժուարութիւն կը յառնէ անոր ծննդեան եւ մահուան թուականներուն նկատմամբ Աղեքսանդրեան Ա. Վ. ի վերջերս հրատարակած մէկ գրքէն (Պատմ. ականաւոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետ. 1911) ուր (էջ 320) կ'ըսուի՝ թէ Մինաս Վ. Առաքելական Միսիոնար կը գրէ Պոլսէն առ հայ կաթողիկէ Առաջնորդ Վ. ն Բրզնիկի, թէ զըկած երկու հայ կաթողիկէ քահանայացունք լատին Եպիսկոպոսին առջեւ դաւանութիւն տուին եւ վկայականներով ետ դարձան, եւ թէ բարեւ կը զըկէ Աբէլ Եպ. ին: Տարին չի նշանակուիր: Նոյն հեղինակը կը յիշէ մեր Աբէլ Արքեպ. ը (էջ 324) 1782ին այսպէս. «Կիւրինի համար՝ քահանայ ձեռնադրուեցաւ յամին 1782 Յովնան Կիւրինցի, Սեբաստիոյ Հրեշտակապետի վանքն, Աբել Եպիսկոպոսէն, թէպէտ Բրզնիկայ պատմութիւնը կը համարի թէ Սեբաստիոյ առաջնորդ էր, բայց ինձ հաւաստի չի թուիր. զի այն ժամանակ Եղիազար էր Սեբաստիոյ Արքեպ. ը: Կրնայ ըլլալ որ Աբել Հրեշտակապետ վանքին առանձին առաջնորդն էր, եւ ինչպէս կը տեսնուի իրեն վրայ եղած խօսքերէն՝ կաթողիկէայ:» Նոյն հեղինակին նշանակած թուականներն առանց կասկածանաց կարելի չէ ընդունիլ: